ԾԻՏԱԿ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Շոշ գյուղում տեղի ունեցավ ընտրողների հանդիպում Ասկերանի № 729 ազգային-տերիտորիալ ընտրական ծկրուգից ՍՍՀՄ ժողովրդական դեպուտատության թեկնածու, արձակագիր, հրապարակախոս և լրագրող Զորի Բալայանի հետ:

Վստահված անձը՝ Էնգելսի անվան կոլտնտեսության տնտեսագետ Հակոբ Թադևոսյանը, ներկաներին հակիրճ ծանոթացրեց թեկնածուի կենսագրությանը, նրա հասարակական գործունեության մասշտաբներին:

Լեռնային Ղարաբաղում Զորի Բալայանին ճանաչում են թե ծեր, թե մանուկ, իր ելույթում ասաց մարզի գրողների կազմակերպության ղեկավար, բանաստեղծ Վարդան Հակոբյանը: Լինելով այս երկրամասի ծնունդ, նա ոչ մի րոպե չի մոռանում նրա հոգսերն ու խնդիրները:

Ընտրողների առջև իր նախընտրական ծրագիրը շարադրեց ժողովրդական դեպուտատության թեկնածուն: ԼՂԻՄ-ում կուտակվել են բազմաթիվ խնդիրներ, որոնք անհետաձգելի լուծում են պահանջում: Մարզը կարիք ունի ժամանակակից դպրոցների ու մանկապարտեզների, մշակույթի տների և գրադարանների, բուժհիմնարկների և ճանապարհների: Բնակելի շատ տներ պետք է կառուցվեն: Բարելավման կարիք ունեն գյուղացիների կենսապայմանները: Հարկ է վերածնել անհետանալու եզրին գտնվող շատ գյուղեր և այլն: Հռետորը հանդիպման մասնակիցներին հավաստիացրեց, որ անկախ այն բանից, թե ինքը դեպուտատ կընտրվի թե ոչ, առավելագույն ջանքեր կգործադրի, որպեսզի Լեռնային Ղարաբաղը հնարավորին չափ շուտ դառնա երկրի զարգացած ռեգիոններից մեկը:

Թեկնածուն պատասխանեց ընտրողների բազմաթիվ հարցերին:

Դահլիճից տրված այն հարցին, թե իրականությանը որքանո՞վ են համապատասխանում այն լուրերը, որ իբր ԼՂԻՄ-ում ընտրությունները կարող են չեղյալ հայտարարվել, ՍՍՀՄ ժողովրդական դեպուտատության թեկնածուն պատասխանեց.

— Ես լսել էի այդ մասին, բայց չգիտեի, որ լուրերը այդչափ տարածված են հենց այստեղ: Համոզված եմ, որ խոսքը վերակառուցման հակառակորդների հերթական պրովոկացիայի մասին է, նրանց, ովքեր ցանկանում են ջրբաժան անցկացնել Հատուկ կառավարման կոմիտեի և Լեռնային Ղարաբաղի բնակչության միջև: Երբ ինձ ասացին, թե այդ մասին Արևմուտքում հաղորդում են այսպես կոչված ռադիոձայները, ես արդեն սկսեցի մտածել, որ ոմանց ըստ երևույթին շատ էր հարկավոր նման կարգի լուրեր տարածել, նկատի առնելով, որ ԼՂԻՄ-ն այսօր գտնվում է ուշադրության կենտրոնում:

Ընդունելով ընտրողների պատվիրանները, դեպուտատության թեկնածուն իր հերթին նրանց կոչ արեց աշխատել վերակառուցման օգտին, համախմբվել արարման հենահիմքի վրա հանուն Լեռնային Ղարաբաղի բարգավաճման:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի հատուկ թղթակից)

Ասկերանի շրջան,
Լեռնային Ղարաբաղի
Ինքնավար Մարզ